

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/3

9 հունիս 2015 թ.

Քննարկվեց «Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 4.974.236 դրամ տուգանքի դեմ:

«Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի դիմումով բերված փաստարկները.

«Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն (Այսուհետ նաև Ընկերություն) զբաղվում է շինարարությամբ և մինչև 2013թ. համարվել է ամսական ԱԱՀ վճարող: Աշխատանքային գործունեության ողջ ժամանակաշրջանում ընկերությունը բարեխղճորեն կատարել է իր հարկային պարտավորությունները:

2012 թ-ի իրացման շրջանառության ծավալը կազմել է 2.508.339 ՀՀ դրամ, սակայն ընկերության կողմից թյուրիմացաբար 2013թ.-ի համար ներկայացվել է ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ:

Մաշտոցի ՀՏ-ն ընդունել է ընկերության կողմից ներկայացված 2013թ-ի տասներկու ամիսների հաշվարկները և միայն 29.09.2014թ.-ին կատարել կամերալ ուսումնասիրություն, որով հայտնաբերվել և արձանագրվել է անճշտությունը՝ առաջարկելով ներկայացնել 2013թ. 1-4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներ և 2013թ.-ի 1-12 ամիսների ճշգրտված հաշվարկներ:

Բողոքաբերը նշում է, որ ընկերության կողմից կատարվել է կամերալ ուսումնասիրության արձանագրության պահանջը՝ ներկայացվել է 2013թ. 1-4 եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներ և 2013թ.-ի 1-12 ամիսների ճշգրտված հաշվարկներ:

ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացնելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի չափը չի փոփոխվել՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել:

Մաշտոցի ՀՏ կողմից՝ որպես հաշվետու ժամանակաշրջանի համար ուշ ներկայացված հաշվարկներ, կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածով նախատեսված պատասխանատվությունը: Արդյունքում՝ համաձայն Մաշտոցի ՀՏ 10.04.2014թ-ի դրությամբ փոխադարձ հաշվարկների տեղեկանքի, Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվարկվել է 4.974.236 դրամի տուգանքի գումար:

Հաշվի առնելով, որ ամսական հաշվարկների ներկայացման պարագայում ընկերության կողմից բովանդակային առումով կատարված են եղել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի հիմնարար պահանջները և պարզապես տեղի է ունեցել թյուրիմացություն՝ մեխանիկական անճշտություն, ուստի ընկերությունը խնդրում է անվավեր /չեղյալ/ ճանաչել Մաշտոցի ՀՏ-ի կողմից «Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 4.974.236 ՀՀ դրամ տուգանքի գումարը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նիստի ընթացքում նշվեց, որ «Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից 2013 թ-ի հունվար ամսից սկսած հարկային մարմին են ներկայացվել ավելացված արժեքի հարկի ամսական հաշվարկներ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թ-ի ընթացքում Ընկերության իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը և ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, ընկերության կողմից պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ:

Ընկերությունում իրականացվել է կամերալ ուսումնասիրություն, որի արդյունքում հայտնաբերվել և 29.09.2014 թ-ին արձանագրվել է անճշտություն՝ առաջարկելով ներկայացնել 2013 թ-ի 1-4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներ և 2013 թ-ի 1-12 ամիսների ճշգրտված հաշվարկներ:

Կամերալ ուսումնասիրության վերաբերյալ 29.09.2015 թ-ի արձանագրությունը ստանալուց հետո ընկերությունը ներկայացրել է 2013 թ-ի 1-4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները, ինչպես նաև 2013 թ-ի 1-12-րդ ամիսների ճշգրտված հաշվարկները:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի դրույթներով ընկերության կողմից ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկները Մաշտոցի ՀՏ կողմից համարվել են չներկայացված: Արդյունքում, ընկերության նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցը, որը 28.10.2014 թ-ի դրությամբ կազմել է 4.974.236 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Երևանի Տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 4.974.236 դրամ տուգանքի դեմ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ